Սեբաստացին, որ յայտնի հակառակորդ էր Մայր Աթոռին, կ'ըսէր թէ «դատեցէք Յովհաննէսի և Ղազարի գործերը»։ Ղազարէն ամէնքն ալ կը խորշէին, վասն զի յայտնի էր իր ընթացքը, իսկ Յովհաննէս կեղծաւորութեամբ ինքզինքը Մայր Աթոռի հարազատ որդի ցոյց կուտար և անոր հասոյթները և նուիրակութեան արդիւնքները օտարները կաշառելու և իր կուսակիցները զօրացնելու կը գործածէր, և այսպէս՝ փոխանակ օգտակար ըլլալու, վնասակար կ'ըլլար Աթոռին, երբ մանաւանդ կը տարաձայնէր, թէ այսքան գումար հասուցած էր Էջմիածին։

Այս նամակներուն Պոլիս հասնելէն յետոյ՝ Յովհաննէս բոլորովին վարկաբեկ եղաւ։ Ի զուր կը ջանար վրդովուած հանրային կարծիքը հանգարտեցնել, խոստանալով ի մօտոյ վճարել Էջմիածինի իր պարտքը և ցոյց տալ իր հաւատարմութիւնը։

Քիչ յետոյ Պոլիս հասաւ Էջմիածինի նոր նուիրակը՝ Մինաս վրդ. Եւդոկիացի, Գաղատիոյ առաջնորդը (1647 – 1676) և անշուշտ կաթողիկոսին կողմէ պատանջեց Յովհաննէս Թիւթիւնճիի իւրացուցած գումարները, սակայն «սա եւս ի սադրելոյ Թլթլեանց միտեցաւ ի կողմն Յովհաննու» (Զամ. Գ. էջ 694)։ Ասոր հետեւանքը այն եղաւ, որ ժողովուրդը զլացաւ իր նուէրները։ Մինաս վրդ. գանգատեցաւ Թրլթրլեաններուն, թէ իրենց պատճառով զինքը կ'անգօսնեն։ Ասոր վրայ՝ Թրլթրլեանք դիմեցին Եպարքոսի տեղակալին և անկէ առին հրամանագիր մը (տիվան թեսկերեսի), որով խստիւ կը հրամայուէր մայրաքաղաքին հայ եկեղեցիներուն տալ, ըստ սովորութեան և առատութեամբ, նուիրակին նուէրները (Զամչեան, Գ. հատ. էջ 694)։